ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մա համաձայն՝ փաստաբանի ծախսը վճարում է նրան ներգրաված գործին մասնակց անձը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը 29.06.2012 թվականի թիվ թիվ ԵԱՔԴ/1401/02/11 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ արձանագրել է, որ .«... փաստաբանի խելամիտ վարձատրությունը նախ և առաջ պետք է դիտել որպես դատական ծախս, և հետևաբար այն պետք է բաշխվի կողմերի միջև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված կարգով: Որպես դատական ծախս, թե՛ հայցվորը և թե՛ պատասխանողը դատական քննության ընթացքում կարող են ներկայացնել փաստաբանի մատուցած ծառայությունների համար կատարված կամ կատարվելիք վճարումը հավաստող ապացույց: Ընդ որում, անկախ վճարված գումարի բռնագանձման մասին պահանջի առկայությունից, վճարումը հավաստող ապացույց ներկայացնելը բավարար է փաստաբանի վարձատրությանը, որպես դատական ծախս, վճռով անդրադառնալու համար: Եթե դատարանը, համապատասխան ապացույցի առկայության դեպքում վճռով չի անդրադառնում փաստաբանի խելամիտ վարձատրության՝ կողմերի միջև բաշխման հարցին, ապա գործին մասնակցող անձինք զրկված չեն կատարված ծախսերի բաշխման հարցը լուծելու համար 142-րդ հոդվածով սահմանված կարգով դիմել վճիռը կայացրած դատարան՝ լրացուցիչ վճիռ կայացնելու պահանջով»:

Տվյալ դեպքում հայցվորները պատասխանողից պահանջել են բռնագանձել փաստաբանին վճարված գումար, սակայն հայցադիմումին կից չեն ներկայացրել որևէ ապացույց, որը կհիմնավորեր, որ հայցվորներին մատուցվել է փաստաբանական ծառայություններ, որպիսի պայմաններում վարձատրություն բռնագանձելու պահանջն անհիմն է և ենթակա է մերժման:

Միաժամանակ նկատի ունենալով, որ պետական տուրքից և փաստաբանի վարձատրությունից զատ այլ դատական ծախսեր չկան, Դատարանը դատական ծախսերի հարցը համարում է լուծված:

<u>Դատարանի վերլուծությունը և եզրահանգումը՝ հայցի ապահովման վերաբերյալ.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը:

Դատարանը, նկատի ունենալով, որ հայցվորի պահանջը ենթակա է բավարարման, գտնում է, որ Դատարանի 08.09.2023 թվականի թիվ ԵԴ2/12703/02/23 հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին որոշման և 14.09.2023 թվականի թիվ ԵԴ2/12703/02/23 կատարողական թերթերի հիման վրա կիրառված հայցի ապահովման միջոցները պետք է պահպանվեն մինչև սույն դատական ակտի կատարումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Խաչ-Արմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության,«Էլլ-Գա-Ման» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցը բավարարել մասնակի:

Անվավեր ճանաչել ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինության 02.06.2023 թվականի թիվ 1 գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը:

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինությունից հօգուտ «Խաչ-Արմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Էլլ-Գա-Ման» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 50,000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

«Խաչ-Արմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Էլլ-Գա-Ման» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Բարեկարգում» տնօրինության՝ փաստաբանի վարձատրության գումար բռնագանձելու պահանջ մասով, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին 08.09.2023 թվականի թիվ ԵԴ2/12703/02/23 հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին որոշման և 14.09.2023 թվականի թիվ ԵԴ2/12703/02/23 կատարողական թերթերով կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև սույն վճռի կատարումը:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի պարտապանի հաշվին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

ԴԱՏԱՎՈՐ **Ս.ՈՒԼԻԽԱՆՅԱՆ**

Վճիռը «___» «_____» 2023 թվականին մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ՈՒԼԻԽԱՆՅԱՆ**